

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա աշխատությունը նվիրված է հայ ժողովրդի հոգեոր մշակույթի քիչ ուսումնասիրված ընդհանրություններից մեկին՝ Ամանորի առնականաբանություններին ու ծիսական սովորություններին։ Աշխատության նպատակն է պատմա-աղագրական, առարական ու րանագիտական քննություններով պարզել Ամանորի անդր հայ ժողովրդի երկրագործական առնականում, նրա պատմականորեն անցած փուլերը, րացահայտել Ամանորի ծիսական համալիրի էական կողմերը, կապն ու առնչակցությունը ժողովրդի առօրյայի հետ, քննարկել Ամանորի ծիսակարգին ուղեկցող ժողովրդական բանահյուսությունը, ընդդեմ ժանրի առանձնահատկություններն ու առաջ քաշել Ամանորի երգաշարի հետ կապված ծագումնաբանական որոշ հարցեր։

Էորտողոգիան՝ ժողովրդական առներն ուսումնասիրող գիտությունը, XIX դ. սկզբին գրեթե լիովին ձևավորված մի մասնաճյուղ էր ընդհանուր աղագրության մեջ։ Հայագիտությունը, որ նշված ժամանակաշրջանում ղարգացում էր ապրում՝ ընդգրկում էր այդ առարները ես։

Ձանաղան ուսումնասիրողներ արրեր առիթներով անգրադարձել են հայ տոմարի ե տոնացույցի հետ առնչվող այս կամ այն հարցին։ Եվրոպացի գիտնականներից կարելի է հիշատակել Վ. Լանգլուային, Հ. Գելցերին, Ա. Կարիերին, Ս. Վերերին, Հ. Հյուրմանին, Ֆ. Գինցելին, Է. Դյուլորեն, Յա. Մարկվարտին և ուրիշներ։ Հայ գիտնականներից ավելի շատերն են ղաղվել այս հարցերով՝ Մ. Չամչյան, Մ. Էմին, Գր. Խալաթյան, Հ. Գաթրճյան, Ս. Գտրազաշյան, Ղ. Սլիշան, Մ. Քաջունի, Մ. Օրմանյան, Ե. Դուրյան, Ե. Սարգսյան, Ե. Պողոսյան, Գր. Ղափանցյան, Սա. Լիսիցյան, Ն. Ակինյան, Սրբ. Լիսիցյան, Աշ. Աբրահամյան, Աս. Մնացականյան, Կ. Մելիք-Փաշյան, Վ. Բզոյան, ինչպես նաև հայագետ Լ. Սեմյոնովը և ուրիշներ։

Հիշատակված հեղինակների ուղագրության առարկան է եղել կամ հայ տոմարը՝ առարական կարգը, կամ հայ գիցարանին առնչվող առանձին հարցեր, կամ առնացույցի առանձին հատվածների հետ կապված ծեսերը, սովորություններն ու խաղերը, օգտագործելով ղրանք որպես օժանդակ նյութ այլալլ հիմնական հարցեր փաստարկելու համար։ Ամրողական մի ուսումնասիրություն, որ նվիրված լինել հայ ժողովրդի երկրագործական առնացույցին, գրված պատմա-աղագրական նյութերի համակողմանի ուսումնասիրության հիման վրա, մեղ հայտնի չէ¹։

Սույն աշխատության համար հիմք են ծառայել առավելապես աղագրական գրավոր աղբյուրները։ Սակայն երկարամյա հավաքական աշխատանքի շնորհիվ հեղինակին հաշոգվել է ի մի բերել Ամանորի մասին Սովետական Հայաստանում հավաքած գաղապիս նյութերը և գրանք և օգտագործել աշխատության մեջ։

Ժողովրդի կենցաղում գործող պաշտոնական տոնացույցը գարերի ղարգացման արգյունք է, և թեպետ արտաքնապես կապվում է քրիստոնեության գաղափարախոսության և եկեղեցու հետ, զժվար չէ այդ առնացույցի մեջ տեսնել նախաքրիստոնեական ժամանակաշրջանի գաղափարների, ծեսերի և արարողությունների հետքեր։

Նախաքրիստոնեական շրջանի տոնացույցը և նրա հետ կապված ղմրոնումների ու հավատալիքների ծիսափունջը սկղրնական շրջանում

¹ 1952 թ. Վիեննայում հրատարակվել է հ. Եփրեմ Վ. Պողոսյանի «Նոր արույ տոնը հին ու նոր հայոց քով» քննական հակիրճ ուսումնասիրությունը, որը նույնքան արժեքավոր է, որքան Ամանորի առնական փնջի նկարագրություններ պարունակող, աղագրական գրավոր աղբյուրներից քաղված նյութերի սպառիչ ժողովածուն։ Աշխատության այդ մասը առանձնապես արժեքավոր է դառնում հեղինակի նախաձեռնությամբ սփյուռքի վերապրողների միջոցով հավաքված նյութերով, որոնք հրատարակվում են առաջին անգամ։

չնայած դարձան քրիստոնեական տոնակարգի և տոների ծագումնաբանական հիմքը և ձևավորման ատաղձը, սակայն լիովին չձուլվեցին նրանց: Նախաքրիստոնեական տոնացույցը շարունակեց իր ինքնուրույն և անկախ դոյութիւնը որպէս ժողովրդի առօրյան, արտահայտելով մասնավորապէս անտեսական բարեկեցության վերաբերյալ ժողովրդական սպասելիքները: Այդ տեսքով շարունակվում է պաշտոնական-քրիստոնեական տոմարին և տոնացույցին դուգահեռ նրա դոյութիւնը: Այդ հարատեւութիւնը պայմանավորված է նրանով, որ ժողովրդական տոնացույցն, իր կրած փոփոխութիւններով հանդերձ, միշտ մրնացել է ժողովրդի աշխարհըմբռնման, շրջապար ըացատրելու ձևերից մեկը:

Տոմարն ու տոնացույցը որոշակիորեն կապված են աստղադիտական, տիեզերագիտական իմացութիւնների ու փորձի կուտակման հետ:

Դարերի ընթացքում կուտակված տիեզերագիտական դիտողական փորձի ու ըմբռնումների հիման վրա ստեղծվում է տոմարը, որն աստիճանաբար կատարելագործվում է: Տնտեսական, քաղաքական այլևայլ նկատառումներով ընդունված պաշտոնական տոմարական կարգն էլ իր հերթին փոխադարձաբար ազդում է ժողովրդի ըմբռնումների, հետեւաբար նաև երկրագործական տոնացույցի վրա՝ առաջացնելով մի շարք տեղաշարժեր: Աշխարհի բոլոր ժողովուրդների նման հայերը ևս, զարդացման որոշակի աստիճանում, հետևելով ընտելւան մեջ կատարվող պարբերական փոփոխութիւններին, առանձնացրել են ժամանակի այնպիսի ըմբռնումը, ինչպիսին տարին է: Սակայն ինչպես տարվա ըմբռնումը, այնպես էլ տարվա եղանակների, ամիսների, շտրաթների բաժանումները առաջացել են ուշ, տոմարական տեսակետի մտահանգումների ճանապարհով: Բնութիւնն մեջ կատարվող փոփոխութիւնները շուրհեն այդպիսի որոշակի սահմանադրումներ, զրանք կատարվում են աստիճանաբար: Այդ պատճառով էլ ժողովրդական երկրագործական տոնացույցը ըացատրելիս տոմարական ընտելի այդ բաժանումները հիմք դարձնելը սխալ է և կարող է ոչ միշտ եղբակացութիւնների հանգեցնել:

Բնութիւնն մեջ կատարվող աստիճանական փոփոխութիւններն արտահայտվում են ժողովրդական-երկրագործական տոնացույցում: Վերջինիս հիմքում ընկած է ոչ թե տարվա եղանակների կամ ամիսների տոմարական բաժանումը, այլ երկրագործի առօրյան իր հաջորդական փուլերով: Հետևելով ընտելւան մեջ կատարվող տե-

ղաշարժերին, երկրագործը դարերի ընթացքում իր աշխատանքային գործունեութիւնից հանած եղբակացութիւնները ձևակերպել է տոնացույցի մեջ:

Հայ ժողովրդի երկրագործական տոնացույցը հասկանալի է դառնում, երբ այն դիտում ենք որպէս զարդացման նախնական փուլում դտնվող երկրագործի տնտեսական գործունեութիւնն ընդհանրացում, գործունեութիւն, որը կազմած էր ընտելւան մեջ կատարվող աստիճանական շարժման, փոփոխութիւնների հետ: Այդ ընդհանրացումների մեջ, ինչպէս ժողովրդի կենցաղում, այնպէս էլ տոմարական հաշվումների համար, վաղուց անտի երկու կարեւոր հենակետեր եղել են դարնանային և աշնանային օրահաշիւները:

Ժողովրդի երկրագործական տոնացույցը ըացատրելիս, այն պետք է դիտել որպէս մարդկանց տնտեսական-արտադրական հարաբերութիւնների կրոնա-ծիսական արտացոլում:

Ըստ այնմ, երկրագործական տարեկան տոնացույցն առաջարկում ենք դասակարգել հետեւյալ կերպ.

1. Տնտեսական տարվա նախապարաստմանը, ցանքին ու բերքաձին նվիրված տոներ ու ծեսեր:

2. Բերքահավաքի, տնտեսական տարվա արդյունքների ամփոփմանը նվիրված տոներ ու ծեսեր:

Առաջին խումբը ժամանակի տեսակետից կարելի է բաժանել ևս երկու մասի:

ա) ձմեռվա վերջին շրջանն ու դարնան սկիզբն ամփոփող ծեսեր, որոնց ընդող են ընտելւան դարձի՝ դադափարն արտահայտող և նոր սկսվող տնտեսական տարվա բարեհաջողութիւնն ապահովելուն նվիրված ծիսական արարողութիւնները: Ամանորի տոնակատարութիւնն, ահա, կապված է երկրագործական տոնացույցի այս փուլի հետ:

բ) դարնան երկրորդ կեսն ու ամռան մեծ մասն ամփոփող ծիսական սովորութիւններ, որոնց ընդող է բերքի աճմանն աջակցելու հմայական միտումը:

Ամանորի տոնակատարութիւնն մեջ առկա են նախնական-կրոնական, սոցիալ-բարոյական ըմբռնումների այն բոլոր տարրերը, որոնք զարգացման հաջորդ փուլում դառնում են ամբողջական կրոնա-բարոյական կաղմակերպված միասնական աշխարհայացքի ատաղձը: Այդ է պատճառը, որ տոնացույցի ծիսական համակարգի մեջ ի հայտ են դալիս մարդու կյանքի զրեթե բոլոր կողմերն արտահայտող բաղմաղան ու-

րադմապիսի ըմբռնումներ: Հենց ադպիսի բնույթ էլ ունեին ժողովրդական սոնակարգի ծեսերն ու արարողությունները, սովորույթներն ու ըմբռնումները: Ժողովրդական սոնակարգի յուրաքանչյուր տոն ներընդունել էր այդ բարդ ու ընդարձակ կրեույթների գրեթե բոլոր տարրերը:

Մասնավորապես դարձանային և աշնանային օրահավասարի հետ կապված տոները, որոնք մեծ մասամբ նոր տարվա տոն էին, միասարը և կարճաակ լին, ինչպես նաև այլևայլ ժողովուրդների մեջ: Դրանք ակում էին մի քանի օր, երբեմն նույնիսկ ավելի: Տոնին նվիրված ավել ժամանակամիջոցում ամեն մի օրը ունենում էր իր սրողակի խնդիրը, որն արտահայտվում էր համապատասխան ծիսական արարողություններով: Այդպես էր, օրինակ, նոր տարվա տոնակատարությունը ձապոնացիների, շինացիների, հույների, վրացիների, ուսնների և այլ ժողովուրդների մեջ: Հայերի մեջ ևս նոր տարվա տոնը տեղում էր մի քանի օր: Այսպես, Բարեկենդանը՝ 1—2 շաբաթ, Նավասարդը՝ 3 օր, քրիստոնեական Ամանորը նույնպես, որոշ տեղերում՝ 3 օր:

Ինչպես երկրագործական տոնական օրացույցն, այնպես էլ Ամանորի առնականությունը ամբողջ պատմական Հայաստանի համար եղել է ընդհանրական, արտահայտելով հոգևոր և սրնտեսական միասնական կյանքով ապրող ժողովրդի աշխարհայացքը: Ազդագրական տարրեր շրջաններում Ամանորի հետ կապված որևէ ծես, սովորույթ կամ տրարողություն երբեմն ուներ ինչ-որ առանձնահատուկ նրբերանգ, բայց արտահայտում էր տվյալ միջավայրին յուրահատուկ առանձնահատկությունը միայն և էական նշանակություն չունեցող ընդհանուր բովանդակության տեսակետից:

Ամանորի հետ կապված սովորույթների մեջ ակնհայտորեն նկատվում է երկու ուղղություն. ա) կենցաղային բովանդակությամբ ծիսական սովորույթներ և բ) պաշտամունքային ծիսական սովորույթներ, որոնց մի մասը կրոնական բովանդակություն ունի և հիմնվում է խոսքի կամ դրծողության հմայական դրույթյան հավատալիքի վրա: Այդ սովորույթներն իրարից տարբերելու չափանիշ կարող է լինել միայն այն, թե ծեսն ի՞նչ դեր ունի տոնի ընթացքում, արդյո՞ք խոսքի կամ դրծի հմայությամբ ընթացյալ վրաներգործելու հավատի արտահայտություն է, թե՞ մարդկանց կենցաղային, հասարակական կամ ընտանեկան հարաբերությունների յուրօրինակ

գրականում, կրոնական համարվող ծեսերը միշտ առնչվում են կենցաղի հետ և ղուրկ չեն կենցաղային բովանդակությունից, իսկ կենցաղային ծիսական սովորույթները նույնպես ինչ-որ շափով ունենում են կրոնական երանդ: Սակայն որևէ ծեսի կամ սովորույթի մեջ կրոնական տարրի առկայությունը բավական չէ բովանդակությունը որոշելու համար: Կենցաղային ծեսի կամ ծիսական սովորույթի հիմնական բովանդակությունը մնում է գյուղական և ընտանեկան համայնքի, բնտանիքի և հասարակության նկատմամբ մարդու հարաբերությունները, աշխատանքային և կենցաղային վարքագծի սահմանները որոշելուն և նորմավորելուն աջակցելը:

Ջարգացման հետագա փուլերում կրոնական երանդ ունեցող ծիսական սովորույթները աստիճանաբար իրենց տեղը ղիջում են կենցաղային բովանդակություն ունեցող ծիսական սովորույթների: Այս երկարատև պրոցեսը մեր օրերում գրեթե ավարտված է, եթե նկատի չունենանք կրոնական երանդ ունեցող որոշ ծիսական սովորույթների վերապրուկները, որ դեռևս գոյություն ունեն մեր կենցաղում:

Նրկրագործական տոնացույցը և, գրտ հետ միասին՝ Ամանորի տոնը ձևավորվել են պատմական այն հետավոր ժամանակաշրջանում, երբ հասարակության ղարդացման ցածր մակարդակի պատճառով բնության և հասարակության երկվություններն սրվող բացատրություններն ու ընդհանրացումները, որոնք տրտահայտում էին հասարակական դիտակցություն ավել վիճակը, ունեին կրոնահմայական երանդ: Արանով պեսք է բացատրել կրոնական բովանդակություն ունեցող ծեսերի ու սովորույթների առկայությունը առնական օրացույցում:

Հայական երկրագործական տոնացույցի մեջ Ամանորի կարևորությունն ու նրա հետ կապված սպասելիքների ըաղմակողմանիությունը մատնանշող ծիսական սովորույթներն իրենց ծագումով հասնում են առաջին օրվա, առաջին պողի, առաջին հանդիպման, առհասարակ «առաջին» նկատմամբ ունեցած ընապաշտական հավատալիքին, երկարծում էին, թե, «առաջին» ունի իրենից հետո եկող նման առարկաների և դրծողությունների էության ու խնդիրների վրա ներգործելու հմայական հատկություն: «Առաջին օրվան» գյուծական նշանակություն վերագրելու ղաղափարն է, որ հանդիսավոր է դարձնում Ամանորի առնականատարությունը, մանավանդ որ «առաջին օրվա» հմայական իմաստն արտահայտա-

վում էր այդ օրն ամբողջ տնտեսական տարվան վերաբերող գուշակությունների կատարման միջոցով: Բնապաշտական դադափարախոսություն, Ամանորի տոնակատարության հիմնական խրն-յիւրն էր՝ նմանողական-հմայական ծեսերով ա-պա՜ովել նոր սկսվող տնտեսական տարին:

Բնապաշտական աշխարհայացք ունեցող անասնապահի և երկրագործի անասնության մեջ բնականաբար այդ հիմնական նշանակություն ունեւր: Այստեղից էլ ըխում է ժողովրդական երկրագործական աոնացույցի ընդհանուր համա-լիրում Ամանորի հետ կապված աոնակատարու-թյունների գրաված կենտրոնական աեղը:

Նոր սկսվող անտեսական տարվան, Ամա-նորին սվիրված ծիսակտն սովորութեներն ունեն երկու հիմնական ուղղություն՝

1) դալիք անտեսական տարվա ըարեկեցու-թյան ապահովմանը նվիրված ծեսեր,

2) այդ ապահովումը խանդարող շար ուժերի ղեմ պայքար արտահայտող ծեսեր:

Ամանորի ծիսափնջի այդ երկու կողմերը միշտ այդպես հստակորեն տարանջատված չեն:

Նրոեմն նույն ծեսի մեջ կարելի է հանդիպել այդ երկու դադափարների միաժամանակյա դրսևորումների, որպես նրա բովանդակության երկու կողմեր, որ բավականին դժվարացնում է նրանց տարրերակումը և ուսումնասիրումը:

Աշխատության մեջ փորձել ենք վեր հանել Ամանորի տոնակատարությանը կապվող ծեսերի մեջ ակնհայտորեն նկատվող վերոհիշյալ դժերը, հեաեելով դրանց մեջ պատմականորեն կատար-ված փոփոխություններին:

Դեռևս XIX դ. վերջերին կուռ և ամբողջական ժողովրդական աոնացույցի ծիսակարդից կենցա-ղում մնացել էին միայն որոշ վերապրուկներ և ավագ սերնդի ներկայացուցիչների հըշողություն-ներ:

Սոցիալ-տնտեսական կյանքում կառարված արմաական աեղաշարժերի հետևանքով, վերջին 50 արվա ընթացքում, ժողովրդի հողևոր կյանքում ևս աեղի ունեցան փոփոխություններ, որոնք արագացրին տոնացույցի հետ կապված ծիսակարդի կենցաղից դուրս մպվելու պրոցեսը: